Հաստատում եմ

Տնօրեն՝ _____ Ս. Սարգսյան

Digitally signed by SARGSYAN SUSANNA 7801640428
Date: 2023.11.01 14:52:46 AMT

«ԵՐԵՎԱՆԻ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎ. Հ. 27 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

2023-2024 ուստարի

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Դասարանի ընդհանուր բնութագիրը- 2-րդ Բ դասարանում երեխաները աշխույժ են, շարժուն, ակտիվ: Նրանք սիրով են հաճախում դպրոց, հարմարվել են դպրոցական ռեժիմին, կարգուկանոնին: Ընկերասեր են, հանդուրժող, օգնող, ուշադիր:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

2.1 — ապահովել բոլոր սովորողներին դասագրքերով:

2.2 —ինտեգրման և հարմարվելու ուղղությամբ աշխատանք կատարել սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ:

2.3 — ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարելու, իրագործելու համար համագործակցել դասավանդող մյուս ուսուցիչների, ծնեղների հետ:

2.4 —դասից և վարքից անբավարար ունեցող աշակերտների հետ աշխատել առանձին:

2.5 — կազմակերպչական հարցեր՝ նպատակային էքսկուրսիաներ, միջոցառումներ հետևել տնային հանձնարարությունների կատարմանը, իրականացնել ծնողական ժողովներ:Հաշվետվություն ներկայացնել տնօրինությանը յուրաքանչյուր կիսամամյակի վերջում:

2.6 — կարգապահական հարցեր՝ հետևել դասասենյակի մաքրությանը, անձնական հիգիենային, դպրոցի և դասարանի ներքին կարգուկանոնին:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 — Հոգևոր դաստիարկություն-ը զարգացնելու նպատակով կազմակերպել էքասկուրսիաներ դեպի եկեղեցիներ, սրբավայրեր: Կարևորել հավատը անձի աշխարհընկալման, ազնիվ, շիտակ մարդ ձևավորելու հարցում: Ծանոթացնել Աստծո 10 պատվիրաններին: Խրախուսել Տերունական աղոթքը անգիր իմանալը, ճիշտ խաչակնքվելը:

3.2 – Գեղագիտական դաստիարակությունը ձևավորվում է ողջ ուսումնական գործընթացի ժամանակ՝ յուրաքանչյուր առարկայի դասավանդման ընթացքում: Այցելել մշակույթի կենտրոններ: Զրուցել մեր երկրի մշակույթի նշանավոր մարդկանց կյանքի և գործունեոիթյան մասին: Կազմակերպել կերպարվեստից և տեխնոլոգիայից ցուցահանդեսներ:

3.3 – Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը ամենօրյա գործընթաց է, որը ձևավորում է հայրենասեր անձ: Այն զարգանում է դաս- միջոցառումների, զրույցների, հերոսական օրինակների, պատմությունների ընթերցման միջոցով, որտեղից ստացած գիտելիքները դառնում են արժեհամակարգ: Ուսումնասիրեն հայ հայրենասեր գործիչների կյանքն ու գործունեությունը, քննարկել՝ նրանց օրինակը դարձնելով վարակիչ:

3.4 – Ֆիզիկական դաստիարակությունը իրականացվում է «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսով: Այն սկսում է զարգանալ աշակերտական սեղանի շուրջ ճիշտ կեցվածքով նստելուց, ֆիզկուլտուրայի դասաժամին ակտիվ մասնակցելուց մինչև խաղ- մրցույթներ: Անհրաժեշտ է հետևել քյլվածքին, անձնական հիգիենային և օրվա ռեժիմին: Մաքուր օդում զբեսնել ամեն օր:

3.5 – Աշխատանքային դաստիարակությունը աշակերտների մոտ ձևավորում է սեր դեպի աշխատանքը, հարգանք աշխատող մարդու նկատմամբ: այն զարգանում է հետևելով դասասենյակի մաքրությանը, իրականացնելով հերթապահություն, մասակցել շաբաթօրյակի:Աշակերտին տալով որոշակի պարտականություն բարձրացնել անձի պատասխանատվությունը:

3.6 – Բնապահպանական դաստիարակությունը աշակերտի մոտ ձևավորում է սեր և հոգատար վերաբերմունք դեպի բնությունը: Այն զարգանում է, երբ յուրաքանչյուր դասին իրականացվում է կյանքի հետ կապի սկզբունքը Կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում: Զրուցել, թե ինչպես պահպանել բնությունը, ինչու է այդ անհրաժեշտ: : Աշակերտը գիտակցում է , որ ինքը բնության մասնիկ է, այն լավ պահելու համար պետք է առաջնորդվել բնապահպանական կանոններով, մասնակցել կանաչապատմանը:

4. Դպրոց-ընտանիք կապը- մշտապես անհրաժեշտ է ակտիվ պահել ուսուցիչ-աշակերտ- ծնող եռամիասնությունը: Յուրաքանչյուր աշակերտի մասին ունենալ տեղեկություն՝ ապահովելով փոխադարձ վստահության մթնոլորտ: Կազմակերպել ծնողական ժողովներ, անհատական զրույցներ, հանդիպումներ դասավանդող ուսուցիչների և հոգեբանի հետ:

Ուսումադաստիարակչական աշխատանքների

հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնական- դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողները
1	Գիտելիքի օր		
2	Օրվա ռեժիմ, դասարանական կանոններ		
3	Զր. նվիրված ՀՀ անկախությանը: Անկախության անգնահատելի դերն ինձ համար		
4	Զր. Մեր ընտանիքը		
5	Ուսուցիչ իմ թանկագին		
6	Մեր փողոցները		
7	Բարեկիրթ շփում, հաղորդակցում		
8	Ինչու է նոյեմբերը գույնզգույն		
9	ՀՀ խորհրդանիշերը		
10	Ով է իմ ընկերը		
11	Ինչ է ազնվությունը		
12	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր		
13	Կախարդական ձմեռ		
14	Հոքիաթային Ամանոր		
2-րդ կիսամյակ			
15	2-րդ կիսամյակի անելիքների քննարկում		
16	Զր. Մեր մեծ բանակ թեմայով: Երգերի ուսուցում		
17	Ինչ ենք սովորում Թումանյանի հեքիաթներից		
18	Մայրենի լեզու		
19	Զր. մենք բնության մասնիկն ենք		
20	Հեքիաթի աշխարհում		
21	Կանանց միջազգային օր		
22	Որտեղ կարելի է խաղալ		
23	Իմ մտերիմ ընկերը		
24	Մայրության և գեղեցկության տոն		
25	Ստուգել գրքերի վեճակը		
26	Մեծ եղերն: Այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր		

27	Մայիսի 9-ը՝ հաղթանակի տոն		
28	Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները		
29	Գիրքն իմ կյանքում		
30	Ինչ գրքեր եմ պատրաստվում կարդալ ամռանը		
31	Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդները		
32	Էքսկուրսիա բնության գրկում		

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	**Քննարկվող հարցերը**	**Ժողովի համառոտ բովանդակությունը**	**Նշում**
	Կազմակերպչական հարցեր Ընտրել,կամ վերընտրել ծնողակոմիտեի նախագահ և օգնականներ	Ընտրվեց ծնեղկոմիտեի կազմը և նախագահը	
	Ժամանակավոր դասագրքերի հարցին գտնել լուծում:Աշխատանքային տետրերի անհրաժեշտության մասին	Ժնողները ցանկացան ձեռք բերել աշխատանքային տետրերը	
	1-ին կիսամյակի ամփոփում, 2-րդ կիսամյակի անելիքների քննարկում	Ստանալ աջակցություն դժվարությունները հաղթահարելու համար	
	Ծանոթանալ երեխաների ձեռքբերումներին և բացթողումներին	Յուրաքանչյուր ծնող իմացավ իր երեխայի ձեռքբերումներն ու բացթողումները	